

ՀՆՆՐԻ ԼՈՆԳՖԵԼԼՈՅԻ «ՀԱՅԱՎԱԹԻ ԵՐԳՐ» Խ. ԴԱՇՏԵՆՅԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Ս. Ս. Բաղդասարյան

Թարգմանչության ասպարեզում Խաչիկ Դաշտենցի խոշոր ավանդներից մեկը Հենրի Լոնգֆելլոյի «Հայավաթի երգը» պոեմի թարգմանությունն է: Այս չքնաղ պոեմը ժամանակին գերել էր նաև հայրենի և օտար ժողովուրդների բանահյուսական գոհարների սիրահար Հովհ. Թումանյանին, ով Ի. Բունինի ժուռնալում թարգմանության հիման վրա թարգմանել էր «Հայավաթից» երկու գլուխ:

«Դաշտենցը դեռ պատանի տարիներից հիացած էր Թումանյանի այս թարգմանությամբ, և, ընդհանրապես, Լոնգֆելլոյի ստեղծագործությունները միշտ էլ եղել են նրա ուշադրության կենտրոնում: Իսկ ամբողջ պոեմի թարգմանությունը կատարելուն նրան դրդել է ամերիկյան մեծագույն պոետի հանդեպ ունեցած սերն ու նրախտագիտության զգացումը»¹, - գրում է Կ. Վարդանյանը:

Ինչպես վկայում է Դաշտենցը, 1937 թվականին, երբ ուսանող էր Մոսկվայում, գրախառնությից գնում է Հենրի Լոնգֆելլոյի միհատորյակը անգլերեն լեզվով և խառն բանաստեղծությունների բաժնում հանկարծ տեսնում է հայկական ժողովրդական երկու երգ՝ «Արագիլին» և «Մանուկն ու ջուրը»: Յուրաքանչյուրի վրա էլ կար հետևյալ ծանոթագրությունը. «Հայկական ժողովրդական երգ՝ Ալիշանի արձակ թարգմանությունից»:

Դաշտենցը «Նախերգանքում» նշում է, որ պոեմը մի չափազանց ինքնաբերական և հուզիչ ստեղծագործություն է, կյանքի փառաբանությանը նվիրված մի հոյակապ ձև:

1852 թվականին բանաստեղծ Ալիշանը, ում սիրտը մորմոռում էր Հայաստանի կարոտից, վեց ամսով բնակություն է հաստատում Լոնդոնում: Այդտեղ նա կազմում է «Հայոց երգք ռասկականք» ժողովածուն, որը պարունակում է միջնադարյան հայ ժողովրդական 19 երգ: Նա այդ երգերը թարգմանում է անգլերեն և վերադարձին, նույն թվականին, հրատարակում է Վենետիկում:

Ալիշանի կազմած այդ ժողովածուն պատահամաբան ընկնում է Հենրի Լոնգֆելլոյի ձեռքը, ով առաջին անգամ ծանոթանում է և, սիրելով հայկական գեղջկական երգերը, դրանցից մի քանիսը թարգմանում է անգլերեն և հրատարակում Ամերիկայում:

Դաշտենցին շատ սրտամոտ և հարազատ էր ամերիկյան այդ շնորհալի ստեղծագործողի հումանիստական, համաժողովրդական էությունը: Նա Լոնգֆելլոյի մեջ տեսնում է հարազատ ժողովրդին, նրա պատմությանը, գրականությանը նման գծեր, բավականաչափ ընդգծված՝ փոքր ու ճնշված ժողովուրդների նկատմամբ նրա մարդկայնորեն բարձր, անկեղծ սերն ու անթաքույց համակրանքը: Դաշտենցը որոշում է թարգմանել Լոնգֆելլոյի «Հայավաթի երգը», որը և դառնում է նրա առաջին լուրջ թարգմանություններից մեկը. «Այդ վճռի մեջ դեր խաղաց նաև նրախտիքը այն մարդու հանդեպ, ով դրանից մոտավորապես հարյուր տարի առաջ այնպիսի ջերմությամբ թարգմանել էր մեր հայկական միջնադարյան ժողովրդական երգերը»²:

Դաշտենցի թարգմանությունը լույս տեսավ 1943 թվականին, Երևանում, իսկ պոեմի վերամշակված տարբերակը լույս է տեսել 1957թ. Լոնգֆելլոյի ծննդյան 150-ամյակի առթիվ:

«Հայավաթի երգը» պոեմի բնագիրը առաջին անգամ լույս է տեսել 1855թ. և այնքան մեծ էր նրա հաջողությունը, որ կես տարվա մեջ ունեցել է 30 հրատարակություն: «Հայավաթի երգը», - գրում է Լոնգֆելլոն, - դա հնդկական Էդդան է, եթե կարելի է այդպես անվանել: Ես այն գրել եմ հյուսիս-ամերիկյան հնդիկների մեջ պահպանված լեգենդների հիման վրա: Դրանց մեջ խոսվում է մի հրաշաճ մարդու մասին, որն ուղարկվել էր գետերը, ձկնորսարանները մաքրելու և ժողովուրդներին սովորեցնելու խաղաղ արվեստներ»³:

Իր թարգմանություններում Դաշտենցը հետամուտ է ճշտորեն վերարտադրելու խոսքի էությունը, ոգին և ոչ թե բառացի նշանակությունը: «Հայավաթի երգը» հանգավոր չէ, բայց վերին աստիճանի երաժշտական է: Բանաստեղծական տողերը և առանձին բառեր հաջորդում են իրար բազմաթիվ կրկնություններով, որոնք հիշեցնում են ծովի ալիքների խաղաղ հարվածները ավազոտ

եզերքներին: Ահա պոեմի «Հայավաթի մանկությունից» մի փոքրիկ դրվագ, որտեղ ներկում է հեղինակի և թարգմանչի մտածողության պատկերային գույզությունները.

*Ու սովորեց Հայավաթը
Ամեն հավրի, թռչնի լեզուն,
Նրանց անունն ու գաղտնիքը,
Ամռանն ինչպես բույն են հյուսում,
Յուրտ ձմռանը՝ ուր են սուզվում,
Կռչեց նրանց իր ձագուկներ՝
Հայավաթի փոքրիկ ճտեր (էջ 36):*

Պոեմի գլխավոր հերոսը՝ Հայավաթը, հրաշալի արհեստավոր է, քաջահաղթ որսորդ և խաղաղասեր մարտիկ: Նա պատկերված է մարդկային կյանքի բոլոր գլխավոր էտապներում, որի մասին են պատմում պոեմի գլուխները՝ «Հայավաթի մանկությունը», «Հայավաթի պալատ», «Հայավաթի ընկերներին», «Հայավաթի նաժո», «Հայավաթի հարսնախոսությունը», «Հայավաթի հարսանիքը», «Պատկերագրություն», «Չարագործի վախճանը» և այլն: Հայավաթը պայքարում է հնդիկ ցեղերի համերաշխության և եղբայրության համար, վերջ է դնում նրանց միջև եղած գժտություններին, կռվում է չար ոգիների, կախարհների, հրեշների դեմ և հաղթում նրանց: Հայավաթը տարբեր ցեղերի ու ժողովուրդների մոտ հայտնի էր տարբեր անուններով և նշանակում է մարգարե, ուսուցիչ: Դիմենք պոեմին.

*Այժմ պետք է լսեք ինչպես
Հայավաթը անտառի մեջ
Աղոթք արավ ու ծով պահեց,
Ո՛չ թե հաջող որսի համար,
Ո՛չ թե հմուտ ձկնորսության,
Ո՛չ թե փառքի կամ հաղթության
Այլ ազգերի նրջանկության,
Ժողովրդի բախտի համար (էջ 54):*

Վերոհիշյալ հատվածում միաձուլվել են թարգմանվող երկի հնչեղությունը և նրա անհատականագումը թարգմանչի կողմից: Պոեմում փառաբանվում է մարդկային ստեղծագործ աշխատանքը՝ կապված տոկուն պայքարի հետ: Թարգմանության տեսությունը սկսելով նախնական աստիճաններից՝ «Ճշգրիտ, բառաձջ», «գուգահեռ», «ազատ» կամ պարզապես փոխադրության կետերից եկել-հասել է այն կետին, ուր գլխավոր շեշտը դրվում է բնագրի գեղարվեստական կառուցվածքը ամբողջական տեսքով, բոլոր տարրերով թարգմանելու սկզբունքի վրա: Սա դժվարին, բայց և միակ ճիշտ ճանապարհն էր, որով գնում էր Դաշտենցը: Դրա վառ ապացույցն է հետևյալ հատվածը.

*Եվ բնության ձայներն ամեն,
Քնքշանք առան նրա երգից,
Բիրտ սրտերը գթոտ դարձան
Նրա անուշ նվագներից,
Որովհետև նա երգում էր,
Ազատություն, սեր ու բաղձանք (էջ 68):*

«Բնագրին հարազատ ու գեղարվեստական, համարժեք ու ամբողջական վերարտադրության դժվարությունները, իրոք, աներևակայելիորեն մեծ են: Դրա համար էլ բանաստեղծները սկսել են դժգոհել, որ իրենք գրում են ուրիշների փոխարեն, ուրիշներն՝ իրենց»⁴, - գրում է Ս. Աղաբաբյանը: Հազիվ թե որևէ մեկը մտածեր, որ «Հայավաթի երգը» ընթերցելիս ընդամենն ընթերցում է թարգմանություն, քանի որ պոեմը գեղեցիկ հյուսվածք էր, ձևի ու բովանդակության ներդաշնակառուցվածք.

*Թաղված էր խոր կացինն արնոտ,
Թաղված էր գոռ լախտը ահեղ,
Թաղված ամեն զենք ու զրահ,
Մոռացված էր մարտակոչը,
Հաշտություն էր ազգերի մեջ:
Որսորդն ազատ որս էր անում,
Ձկնորսները՝ մակույկ շինում,
Չուկ են բռնում լճում, գետում,
Որսում այծյամ ու ջրաշուն (էջ 140):*

Հենրի Լոնգֆելլոն եղավ այն առաջին բանաստեղծը, որ Ատլանտյան օվկիանոսից այն կողմ, մի պահ իր աչքերն ուղղեց հայ ժողովրդին, նրա գրականությանը և մշակույթին: Լոնգֆելլոյի պոեզիայի գլխավոր գծերն են պարզությունը և քնքշությունը: Դաշտենցին հաջողվել է պահել հենց այդ կարևոր գծերը: Վերին աստիճանի գրավիչ է այն հարցի լուսաբանությունը, թե ինչպես է հայկական բանահյուսային տարերքը նեցուկ դարձել հնդկական բանահյուսության գույները մարմնավորելիս:

Ծանոթագրություններ

1. Կ.Վարդանյան, «Սասուն աշխարհի բանասաճո», Երևան, 2000, էջ 56:
2. Հ.Լոնգֆելլո, «Հայավարի երգը» (առաջաբան), Երևան, 1989, էջ 5:
3. Նույն տեղում, էջ 240:
4. Ս.Աղաբաբյան, «Հողվածներ, դիմանկարներ, հուշեր», Երևան, 1982, էջ 103:

Գրականություն

1. Կ.Վարդանյան, «Սասուն աշխարհի բանասաճո», Երևան, 2000:
2. Հ.Լոնգֆելլո, «Հայավարի երգը» (առաջաբան), Երևան, 1989:
3. Ս.Աղաբաբյան, «Հողվածներ, դիմանկարներ, հուշեր», Երևան, 1982:
4. Դ.Համբարձումյան, «Գեղարվեստական ստեղծագործությունը և նրա թարգմանությունը որպես բանասիրական համալիր քննության առարկա », Երևան, 2008:

“Песнь о Гайавате” Генри Лонгфелло в переводе Хачика Даштенца.

С.С.Багдасарян

Резюме

В статье раскрывается особое отношение Генри Лонгфелло к армянскому песенному искусству, что и стало стимулом для того, чтобы переводчик Хачик Даштенц принялся за перевод прекрасной поэмы “Песнь о Гайавате”. Перевод довольно удачный, а сама поэма-воспевание мирного и честного труда.

“The song of Hiawatha” by Henry Longfellow in translation of Khachik Dashtents.

S.S.Baghdasaryan

Summary

The article expresses Henry Longfellow’s special attitude to armenian song art, that stimulated the translator Khachik Dashtents to translate a wonderful poem “The song of Hiawatha”. The translation is quite good, the poem itself – is the praise of peaceful and honest labour.